ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Կոտայքի մարզ, Պառոշյան բնակավայր *01.11.2024թ.*

Սույն թվականի նոյեմբերի 1-ին ժամը 11.00-ին ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պառոշյան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ ՀՀ ՊԵԿ կողմից նախատեսվող Պառոշյան բնակավայրի վարչական տարածքում Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումների (առաջին հանրային քննարկում) նիստը:

Ներկա էին Նաիրիի համայնքապետարանի, ՀՀ ՊԵԿ, «Տրանսնախագիծ» ՓԲԸ, «Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչները և համայնքի բնակիչները (մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով, և տեսաձայնագրությունը կցվում են արձանագրությանը):

Բացման խոսքով հանդես եկավ Պառոշյան բնակավայրի վարչական ղեկավարի տեղակալ Յուրիկ Ռզգոյանը: Նա ողջունեց մասնակիցներին, շնորհակալություն հայտնեց ներկա գտնվելու համար և խոսքը փոխանցեց Ծրագրի ձեռնարկող ընկերությունների ներկայացուցիչներին:

Ելույթով հանդես եկավ «Տրանսնախագիծ» ՓԲ ընկերության ներկայացուցիչ Ալիսա Նավադյանը: Նա հակիրճ ներկայացրեց հանրային քննարկման առարկան, ասաց, որ համաձայն օրենքի սույն գործունեության շրջանակներում նախատեսվում է անցկացնել 2 հանրային լսում՝ ներգրավելով շահագրգիռ հանրությանը: Նշեց, որ այս լսման ժամանակ կքննարկվի նախագծի վերաբերյալ բնակչության կողմից հնչած առաջարկություններն ու մտահոգությունները և խնդրեց հնարային քննարկման մասնակիցներին ներկայանալ:

Այնուհետև ՀՀ ՊԵԿ ներկայացուցիչ Հրայր Ոսկանյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության մանրամասն բնութագիրը, նշելով, որ նախատեսվում է ունենալ վարչական և ԱՏԳ մասնաշենքեր, ինչի արդյունքում գործունեությունը կկենտրոնացվի: Նա նաև հավելեց, որ շինարարության և շահագործման ընթացքում կներգրավվի տեղական աշխատուժը:

Բնակիչներից մեկը հարցրեց, թե արդյո՞ք նախատեսվում է նոր ճանապարհների կառուցում բեռնատար մեքենաների համար, քանի որ Ծրագրի իրականացման արդյունքում կաճի մեքենաների շարժը և առկա ճանապարհները կդառնան գերծանրաբեռնված:

2. Ոսկանյանը պատասխանեց, որ ներկայացված ծրագրի շրջանակներում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, սակայն նշեց, որ բարձրաձայնված հարցը շատ կարևոր է և այն պարտադիր կարձանագրվի:

3. Ռզգոյանը և ներկաներն առաջարկեցին նաև դիտարկել հանրային տրանսպորտի հետ կապված հարցերը:

Ա. Նավադյանը նշեց, որ ներկայացված ծրագրի իրականացման արդյունքում ընդհանուր առմամբ կզարգանան բոլոր ենթակառուցվածքները, ինչպես նաև կակտիվանա մարդկանց շարժը ներկայացված տարածքում և դրա հարևանությամբ: Նա նշեց, որ այդ զարգացումների հետ մեկտեղ հաշվի կառնվեն նաև հանրային տրանսպորտի և նոր ճանապարհների հետ կապված հարցերը:

Այնուհետև Ա. Նավադյանը անդրադարձավ գործունեության հետևանքով հնարավոր բնապահպանական ռիսկերին/անհարմարություններին: Նշեց, որ հիմնական ռիսկերը բնակիչների համար կլինեն աղմուկը և փոշու արտանետումները: Ավելացրեց, որ համապատասխան միջոցառումներ կմշակվեն դրանց մեղմացման համար, իսկ մասնավոր բողոքների/առաջարկությունների, դեպքում բնակիչները կարող են դիմել շինհրապարակի ցուցատախտակին նշված կոնտակտային տվյալներով: Նա հավելեց, որ ծրագրի իրականացման ընթացքում հասանելի են լինելու համապատասխան մասնագետներ, որոնք շատ արագ կարձագանքեն մարդկանց դիմումներին:

«Քոնսեկոարդ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արման Խաչատրյանը իր ելույթում ներկայացրեց շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենքով սահմանված ընթացակարգը, ինչպես նաև նախատեսվող բնապահպանական միջոցառումները: Մասնավորապես նա կարևորեց այն հանգամանքը, որ իրականացվելու են ելակետային գործիքային չափումներ աղմուկի և փոշու մակարդակները ֆիքսելու համար, ինչպես նաև պարբերական գործիքային չափումներ՝ հնարավոր վտանգավոր ազդեցությունները արձանագրելու և արագ կառավարելու համար: Նա նաև նշեց, որ անհրաժեշտության դեպքում կիրականացվեն նաև արտապլանային գործիքային չափումներ:

Ներկաները հետաքրքրվեցին, թե ե՞րբ է նախատեսվում սկսել շինարարական աշխատանքները:

Ա. Նավադյանը պատասխանեց, որ կա օրենսդրական որոշակի ընթացակարգ, որն ավարտելուց հետո միայն հնարավոր կլինի սկսել շին.աշխատանքները:

Յ. Ռզգոյանը հարցրեց, թե արդյո՞ք նախատեսվում է տարածքում ունենալ ոռոգման համակարգ:

Հ. Ոսկանյանը պատասխանեց, որ նախագծով նախատեսվում է ունենալ ժամանակակից ոռոգման համակարգ, քանի որ ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է իրականացնել բավականին շատ կանաչապատում ներկայացված տարածքում, ինչը հետագայում պետք է խնամել:

Այնուհետև Ա. Նավադյանը և Հ. Ոսկանյանը ներկաներին համակարգչով ցույց տվեցին նախատեսվող գործունեության եռաչափ տեսաձայնագրությունը:

Քանի որ այլ հարցեր չհնչեցին Յ. Ռզգոյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին և փակեց նիստը:

Հանրային քննարկումների պատասխանատու և վարող՝ Յ. Ռզգոյան

Ձեռնարկողի ներկայացուցիչ՝ Ա. Խաչատրյան